

բոր ես հիւանդութեան անկողինքումն տանջւում եմ, Դու ես, որ Քո շնորհդ ու ողորմութիւնդ ինձանից պակաս չես անում: Քեզ քաշիր ողորմելի հիւանդիս սիրտն, որ իմ հաւատոս միշտ տնտասան մնայ, այն ժամանակ մահն էլ ինձ համար մի վտանգաբեր բան չի լինիլ:

Թարգ. ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆ

Աբգայն Յակոբայ, Աբգայ Եպիսկոպոսին, աստուծոյ Բան Ներբողանին Ս.
Կարապետին և Մկրտչին Յակոբան:

Յիսուս լոյս փառաց որ զամենայն տիեզերս պայծառացոյց ծագումն յայտնութեան քո, յայտնեալ առ իս ի նշուղից շնորհաց քոց, որպէս զի լուսաւորեալ քեւ, խօսեցայց զքէն իմաստութեամբ: Քրիստոս լոյս հեթանոսաց՝ որ հալածեցեր զիսաւարն անգիտութեան ի չորից կողմանց տիեզերաց, հալածեալ զծուլութիւն մտաց իմաց, և զարթո՞ղ բանս իմ պատմել զանքըննելի տնօրէնութիւնդ քո: Անսկիզբն նկարագիր, անըսկզբնականին Աստուծոյ, որ և ամենայն գեղեցիկ նկարագիրք արարածոց՝ քեւ կատարեցան: Շնորհեալ և ինձ նկարագրել բան միոյ գեղեցիկ պատկերի: Դու տաս ձրի ամենեցուն, որոց խնդրեն ի քէն զպէտս իւրեանց, տնւր և իմաց բանիցս ի զարմանալի քոյոց իմաստիցդ՝ խօսել զքէն: Դու տաս լոյս արեւու և տապ հոյ, խոնաւութիւն ջուրց և ծանրութիւն հողոյ: Դու տաս բան՝ բերանոյ, խօսք՝ լեզուաց և շարժումն շրթանց՝ առ յայն, Դու տաս խորհուրդ սրտի, խսկումն մտաց և բան լեզուի՝ մեկնել զխորհուրդս սրտի: Եւ ամենայն պարգեք ի քէն է և քեւ և վասն քո եղիցի: Զի առանց քո եթէ խօսի ոք՝ քակեալ և աւերեալ են բանք նորա:

Առանց ազգման քո, Տէր, ընդունայն է բան, վասն զի մարմին և լոկ շունչ, յոր ոչ դու, Տէր զկենդանարար հոգիդ քո, փչեալ իցես ի նմա, դատարկ է ի շնորհաց: Եւ արդ՝ պայծաւութիւն միոյ պատկերի զարհուրեցուցանէ զիս հոգեւոր գեղեցկութեամբն իւրով: Եւ Դու, Տէր, տնւր ինձ բան, և բաց զշրթունս իմ խօսել վասն նորա, վասն զի դու ես պատճառ

գեղեցկութեան նորա և ոչ թէ նորա միայն՝ այլ ամենայն գեղեցկութիւնք գոյից՝ քեզ զարդարեցան և ի քո մշտնջենաւոր զօրութենէդ նկարագրեցան։ Ահա ասիկ բռնագատէ զիս սէր քո, Տէր, հիւսել պսակ կարասեալին քո։ Տաւր ինձ, Տէր, ի քոց գանձուցդ զմարգարիտս և զսպազիոնս, որովք վայելէ զարդարել զնա։ Փշեա՛ Տէր, ի բանս իմ, զկենդանորաբար հոգիդ քո, զի կարողացայց խօսել ընդ քեզ։ Զօրութեամբ քո Տէր մերձենամ երկիւղիւ գոյիլ զքարոզիչն քո, վասն զի հրաւիրէ զիս խօսել զմարմնաչու ճառս իւր, որ է աւետաւոր մարգարէ և քահանայ և որդի քահանայապետի, Աւտացի յազգէ և յամուլ արգանդէ։ Բարձրացեալ կրօնիւք իբրեւ զհրեշտակ և լըցեալ ամենայն երկնային պարգևօք իբրեւ զծով մեծ։ Վասն զի մարգարէ և առքեալ և սիրելի հարսին և բարեկամ՝ փեսային, զի լուաւ զձայն փեսային, և ուսաւ զխորհուրդ նորա՝ զգեցոյց և հարսին զպատմութեանն՝ զորէ անգ գետն Յորդանան և զարդարեաց զնա, որպէս զի տեսցէ փեսայն զգեղեցկութիւն նորա։ Նիւթեաց և հանդերձս ի սուրբ աւազանէն, որպէս զի զարդարեացէ այնու և զամենայն մանկունս առագաստին։ Յառաջարեբեաց պատմութեանս ի տանէ փեսային, անգեալս ի Զրոյ և ի հոգւոյ զի այնու պաճուճեացէ զազգս հարսին։ Նկարեաց ի՛ գետն Յորդանան զհրեղէն և զծովանման վերարկուն, զի յորժամ՝ լուտացի և սրբեացի՝ հարսն այնու սփածանիցի։ Արդ՝ զայսպիսի մեծ և զարմանալի գեղ զխորհրդ համարձակիցի ոք պատմել։ Զի և նոյն ինքն՝ բանս մեր պարտի ի նմանէ, և ես որպէս համարձակիցիմ նկարակերտել՝ զպատկեր նորա, զի և գունաւոր նիւթք իմ՝ տկարագոյնք են և տգեղ և չեն բաւական նմա, զայնպիսի սքանչելի այր սր բան ճառեցէ, զի և ինքն լեզու՝ սարսէ և գոզայ ի պատմութենէ նորա։ Վասն Յովհաննու սփած մեծ է խօսել, և բազում զգուշութիւնք պիտայ են, ո՛վ սիրելիք, վասն զի ոչ եթէ զմի փառս զգեցեալ է նա՝ այլ զբազումս։ Մարգարէ արդեօք կոչեմ զնա, և ոչ հաւանեցուցանէ զիս բանս, վասն զի տեսանեմ զգործս նորա և զփիճակ խառնեալ ընդ առքելոցն, Առքեալ արգեօք տալիս զնա, և ահա դատեալ է ի գունդս մարգարէից։ Այլ և քահանայ մեծ, զի ի նմա լցաւ և կատարեցաւ և զտեղի առօրէնքն Մովսէսի, վասն զի ի նմանէ և աստ դատարկացաւ ի

քահանայութենէ: Սա է որ ծնաւ ի դռներէ անտի Ահարոնի որպէս մարմնաւոր՝ և մատոյց պատարագս հոգեւոր իրբւ ըզ-
 Կելքիսեղեկ: Սա է՝ որ ել ի թլփատութենէ անտի ըստ հին
 օրինացն, և յայտնեաց զանձեռագործ թլփատութիւն նորոյ
 օրինացս: Սա է՝ որ եղև միջնորդ երկուց Կտակարանացն. զա-
 աւորին ելից և կատարեաց, և երկրորդիս սկիզբն արար: Սա է՝
 որ ծաղկեցաւ ըստ օրինացն Մովսէսի, և ետ զպտուղ իւր ըստ
 Աւետարանին Քրիստոսի: Սա է՝ որ լցաւ Հոգւովն Սրբով՝ մինչ-
 դեռ էր յորովայնի մօր իւրում, և աւետարանեաց օրոյց կու-
 սին Մարիամայ՝ թէ յղացեալ է զՔրիստոս յորովայնի իւրում:
 Սա է՝ որ խաղաց ցնծալով յորովայնի մօր իւրում, և անդ եր-
 կրրպագեաց հինաւուրց մանկան յորովայնի կուսին: Սա է՝ ճըշ-
 մարիտ բանաւորն, որ և ոչ արգանդ մօրն կարաց լռեցուցանել
 զնա յաւետարանելոյ զՏեառն իւրոյ զյայտնութիւն: Սա է՝ որ
 գոչեաց բերանով մօր իւրոյ վասն Տեառն որդոյն իւրոյ, և ա-
 սաց. օրհնեալ է նա և օրհնեալ է մայր նորա: Սա է՝ որ ասաց
 բերանով մօր իւրոյ ընդ սուրբ կուսին Մարիամու, թէ օրհնեալ
 ես դու ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո: Սա է՝ որ
 նեղեաց զծեր ամուլ մայրն իւր ի խաղալն յորովայնին, զի օրհ-
 նեցէ զՏալիթայ կոյս Մայրն, որ յղացեալ ունէր յարգանդի
 զծեր մանուկն հինաւուրց: Սա է՝ որ յորովայնէ սկսաւ քարո-
 զել, և ոչ գաղարեաց մինչև ցտուրն Հերովդէի: Այլ և զկնի
 այնորիկ խօսի և յանդիմանէ իրբւ զարիւնն Աբելի արդարոյ:
 Սա է՝ որ ընթացաւ ի գետս որպէս զորոտրդ, և ըմբռնեալ կա-
 լաւ անդ զօրսն հոգեւոր: Սա է՝ որ եղև ձայն յանապատի և
 պատրաստ արար զճանապարհս հեթանոսաց՝ զի եկեսցեն առ
 Բանն Աստուած: Սա է՝ որ եղև սիրելի հարսին, և խօսեցաւ զնա
 բարեկամին իւրոյ փեսային ի վերայ Զուրց՝ որպէս զՀռեբէկ
 զուստր Բաթուելի Խառանացւոյ: Սա է՝ որ եկն եհաս մկրտել
 զորդին Աստուծոյ և լուաւ զձայնն հայրական յէական լու-
 սոյն եթէ դա է որդի իմ՝ սիրելի: Նոեւ և զՀոգին Սուրբ ե-
 կեալ ի վերայ փառակցին իւրոյ որ և բոլոր երրորդութեանն
 դաւանութիւն, և միոյ բնութեանն քարոզեալ լինէր անդ:
 Սա է՝ որ զյոյժ խոնարհութիւնն իւր առ Աստուածային բարձ-
 րութեանն համեմատութիւն վկայեաց, եթէ չիմ՝ բաւական
 լուծանել զխրացս կօշկաց նորա, որ և յայմանէ բարձրացեալ

արժանի եղև ձեռնագրել զամենակատար գլուխն։ Սա է՝ որ շօշափեաց մարմնաւոր ձեռամբ՝ զոր սերտութէն անելութ հրեղէն ունեւեօք հաղիւ համարձակեցան ի կայծակն խորհրդոց նորա։ Սա է՝ որ բաց երեսօք հայեցեալ մկրտեաց զնա, զոր սերտութէն ծածկէին զդէմս թեւասքօղեալ յաճէ փառաց նորա։ Սա է՝ որ եղև խայտալով յղանալ նորա և կաքաւելով մահ նորա, զի ուրախացի նովաւ վշտացեալ հարսն և մոռացի բզսուգ իւր։ Սա է ողկոյզն, որ պողաբերեաց յետ ժամանակի յամուլ բարունակէ անտի, որ կթեցաւ և մղեցաւ ի սկուտեղն Հերովդիազայ յանօրէն բաղմականին, բայց ուրախացաւ նովաւ հարսն սուրբ յանարատ առագաստին։ Սա է՝ որ յառաջեաց նախ քան զյաւհոտան ստեղծագործն յորովայնին և ի գերեզմանին և ի գոթոս քարոզելով զնա յամենայն օթեանս։ Սա է՝ որ եթէ ես և ամենայն արարածք կցորդիմք միմեանց՝ ոչ կարեմք արժանապէս ճառել զնմանէ։ Սա է՝ որ եթէ ծով և ցամաք, օդք և պարբ աստեղաց ի միասին գան՝ ոչ կարեն նկարագրել զգեղ նորա։ Եւ զիմբդ արդեօք նկարագրեսցի ի մէնջ, որ ի վերէ քան զմեզ։ Զի թէ և զերեւելի գեղ նորա նկարեմք՝ զխայտալն յորովայնի մօրն ո՞վ կարէ նկարագրել, վասն զի ի ծածուկ է գեղեցկութիւնն այն և ի վեր քան զբանս։ Զոր և Տէր մեր Յիսուս Քրիստոս, որոյ ամենայն ծածուկք յայտնի են նմա, վասն զի նա ստեղծ առանձին զսիրտս մարդկան և ի միտ առնու զամենայն գործս նոցա, նոյն ինքն նիւթեաց բանիւ զմեծալայելուչ գեղեցկութիւն նոր պատկերին նորա ասելով եթէ ի ծրնունդս կանանց չիք որ մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ։ Դագարեսցին այժմ՝ ամենայն գովասանական բանք մեր՝ որ յաղագս Յովհաննու, և քարոզեսցէ բան Տեառն իւրոյ՝ թէ ո՞րչափ է մեծութիւն նորա, ի պատմել զմեծութիւն շնորհի նորա։ Այ խնդրէ նա զիս և ոչ զայլ որ, քանզի տէրն իւր յայտնեաց զնա ամենայն աշխարհի։ Ասէ, ի ծնունդս կանանց չիք որ մեծ քան զնա։ Տես աստանօր թէ ո՞րքան շնորհս և յորպիսի ծայրագոյն աստիճանս վերացեալ բարձրացաւ նա։ Արդ լայնեա՞ զմիտս քո և յառաջեաց յառաջինսն և ի միջինսն և ի վերջինսն և թրւեա՞ զպարգևս նոցա և ապա իմասցիս զառաւելութիւն շնորհի նորա։ Եկայք արդ՝ թուեսցուք զգեղեցիկսն և զկատարեալսն զլնտիր և զանբիծ արսն, զորս ոչ արժէ աշխարհս, յորժամ

զնոցայան իմանամք, և ապա յայնժամ տեսցուք և ի միտ առ-
ցուք՝ թէ ռիբան մեծութիւն շնորհաց ծրարեալ և կնքեալ է
ի բանիս յայսմիկ, եթէ չէ որ յարուցեալ մեծ ի ծնունդս կա-
նանց քան զՅովհաննէս Մկրտիչ, և արդ՝ մտադիւրութեամբ
ունկն դէք բանից իմոց, զի սկիզբն արարեալ պատմեցից ձեզ
յառաջին արդարոյ անտի յԱրեւել, վասն զի նա խլմբեաց զինքն
քահանայ Աստուծոյ հաճոյական, որ պատարագեացն և պա-
տարեգեցաւ ի վերայ ճշմարիտ և ընդունելի պատարագին իւ-
րոյ: Եւ յետ այնորիկ զարգարն զԱլէթ՝ որ էր պատկերակից
Ադամայ, որպէս որդի փոխանակ հօր, զի նա շինեաց զերկիր
ճշմարտութեամբ իւրով: Եւ ապա յետ նորա Ենովս հաստա-
տութեամբ յուսոյն, որով նորոգեաց զկերպարանն Ադամայ
ի պատկեր իւր և կոչեցաւ մարդ ճշմարիտ: Եւ ապա Ենովք,
որ պինդ պահօքն հաճոյացաւ Աստուծոյ և յանմահութիւն
փոխեցաւ: Իսկ Նոյ կուսութեամբ ընտրեցաւ՝ որով արժանա-
ցաւ ապրիլ տապանաւն և զօրհնութիւն աճման և բազմանալոյ
ընկալաւ և վերստին հայր աշխարհի լինիլ հաստատեցաւ: Նա և
Մեղքիսեդեկ, որ ոչ ի մարդկանէ էառ զքահանայութիւն՝ այլ
յԱստուծոյ, յօրինակ մշտնջենաւոր քահանայապետին, այլ և
պատարագ նորա հոգեւոր էր, վասն զի ոչ ըստ օրինակի հրէիցն
մատուցանէր: Տեսցուք արդ և զԱբրահամ, որ առ սէրն Աս-
տուծոյ ոչ խնայեաց ի միածինն իւր, այլ հանէր զսուրն կապէր
և զԻսահակ առ ի հանել զնա յողջակէզս Աստուծոյ: Եւ զԻճնչ
ստացից զԻսահակ, որ մտադիւր յօժարութեամբ մատչէր առ ի
զենումն պատարագ Աստուծոյ: Նա և Յակոբ, որ մենամար-
տեալ ընդ Աստուծոյ և օրհնեալ ի նմանէ Աստուածատես ա-
նուանեցաւ: Այլ և զՅովսէփ որ յաղթեաց ողջախոհութեամբն
իւրով պիղծ ցանկութեան կնոջ եգիպտացւոյն ի սենեկի անդ:
Իսկ և զայրն արգարեւ անարատ, որ մեկնեալ էր և զատեալ
յամենայն իրաց չարեաց, զչայրն համբերութեան զսուրբ երա-
նելին որ հանդիսացաւ ի նահատակութիւն մինչ ի զբաւ մար-
տին, և նորոգեալ պսակեցաւ յԱստուծոյ կրկին կենօքն և
ստացուածովքն: Նա և զմեծն Մովսէս, որոյ գէմբ երեսացն
պայծառացան ի տեսլենէն անտի Աստուծոյ: Այլ և զՅեսու, որ
կապեաց զարեգակն և զլուսինն ի գնացս իւրեանց: Իսկ և ըզ-
Յեփթայի, որ ետ զգուստր իւր ի զենումն պատարագի փոխա-

նաև յազթութեանն: Եւ զգորաւորն Սամսոն, որ ի ձեռն հա-
 ւատոց իւրոց բրիւեցոյց զջուր ի չորացեալ ծնօաէ իւրոյն: Այլ և
 զարին Գէգէօն, որ արժանացաւ ընդունել զօրինակ անա-
 րատ և անապական ծննդեան կուսին Մարիամու ի գաթութուն
 լցեալ երկնային ցօգոյ: Նա և զՍամուէլ, որ սնու ի տունն
 Աստուծոյ և սպասաւոր եղև սրբութեան ի մանկութենէ իւր-
 մէ: Զի՛նչ ասացից և զՆաւիթ, որ գտաւ այր բոս կամաց սրբ-
 օրն Աստուծոյ և էր մարգարէ թագաւոր, քահանայ և աս-
 տուածահայր և գիւհաշարժ սաղմոսասաց: Տեսցուք և զԱս-
 տուածայինն Սօղոմոն՝ զգերահարաշ իմաստունն, որ ոչ գտաւ
 իմաստութեամբ համեմատ նմա յորդիս Ադամոյ: Տեսցուք արդ
 և զամենայն մարգարէսն, որք պատմեցին զհանդերձեալսն,
 վասն զի ընկալան զհոգին սուրբ և ծանեան զխորհուրդն Աս-
 տուծոյ: Ահաւասիկ և զԵղիա, որ և ոչ երկինք և տարերքս ու-
 մենայն բաւականացան անցանել զբանիւ նորա, յարոյց մի-
 ռեալ և կապեաց զերկինս իջոյց հուր յերկնից, ալրեաց զերկու
 յիսունսն և ապրեցոյց զերկիւղածսն. ետ անձրև երկրի, մա-
 տոյց զպատարաքն, կոտորեաց զմարգարէսն Բահաղու և յա-
 մօթ արար զԱքաբ. արար և այլ բազում բանչելիս և յետոյ
 վերացաւ հրեղէն կառօք ի յերկինս: Այլ եւ Եղիշա, որ ընկալաւ
 կրկին զօգի նորա, տես թէ՛ ճրպիսի սքանչելիս գործեաց, ե-
 հերձ զգեան Յորդանանու և բժշկեաց զջուրսն Երիքովի. ետ
 զաւակ ամլոյն և առ նմին զյայս յարութեանն արդեամբք եցոյց,
 սրբեաց զբորոտութիւն Նէէմանայ և բորոտեցոյց զԴեէզի. ետ
 նշան յազթութեան թագաւորացն իսրայելի առանց պատերազ-
 մի. այլ և մարմին նորա առանց հոգւոյ՝ ետ զկենդանութիւն
 մեռելոյ: Եւ վասն Յովհաննու զի՛նչ ասացից, բայց եթէ խո-
 րոցն տացուք զպատմութիւնս նորա գլխել, վասն զի առեալ
 զնա անգնդոց իբրև զհաւատարիմ ծառայակից, և ետ զնա
 ցտէր իւր իբր զպատուական մարգարիտ, որպէս ձուկն այն
 առ Պետրոսիւ զսատերն ետ՝ երկնաւոր թագաւորին մոտնել
 ի հարկս երկրաւոր թագաւորին: Եւ մեզ գիտելի է վասն Յունա-
 նու, որ եղև նշանակ որդւոյն Աստուծոյ յամենայն ճանապարհս
 իւր, վասն զի գուշակիաց զերեքօրեայ թաղումն և քարոզեաց
 զմահն և զյարութիւն նորա, լինելովն ի փոր կիտին զերիս
 աիւս և զերիս գիշերս: Եւ եղև նա լրտես ի ձեռն ձկանն խորոց

ծովուն, յօրինակ այնմ՝ որ ի ձեռն մահուն և թաղման իւրոյ լինելոց էր լրտես և փրկիչ ի խորս դժոխոցն՝ գերելոցն ի նմա հոգւոցն։ Զի՞նչ ասասցուք և վասն նսայեայ և Երեմիայ, որք եղեն անօթք աստուածութեանն և առաքինութեամբ մարմնոցն բարձրացեալ եղեն հոգւով, մինչև ժամանեալք ի տեսիլս անյայտիցն, որք պայծառացեալք իրրև զարեգակն մարգարէական հոգւոյն իւրեանց, և լուսովն Աստուածպաշտութեան հալածեցին զիսաւարն անգիտութեան։ Տեսցուք և զայլ մարգարէսն, զՅոյսէ, զՅովէլ, և զԱմուս, զՆաւուս, և զԱբդիու, զԽիբաս և զՍոփոնիաս, որք նախ քան զգալուստն Քրիստոսի Յիսուսի աւաքեալք եղեն հօր Աստուծոյ։ Եւ փողով մարգարէութեամբն իւրեանց քարոզեցին զգալուստ կենարարին, որք մեռուցին զինքեանս աշխարհի և տեսաք իւրեանց կենդանի են։ Ասացից և վասն Նդեկիէլի, որ այնպէս չարչարանօք առաքինութեամբ տարեալ մարմնականաց կրից, մինչ գրեթէ ամենեւին հոգի լեալ, և նովին թեթեւացեալ վերացաւ ի տեսիլն Աստուածային, և ետես զչօրեքկերպեան կառս քերովբէից, ութթեան աշուօք, լուաւ և զձայնն սաղայի և զորոտն սոսկալի, ետես և կայծակունս գիզի զամբար խռնելի և ճառագայթ շողի, և բազմադիմի ութանկիւն թեի, անիւք թեալի մի առ մի միջի յարաշրջելի, որ պարայած ի մին միոյ զինի բոլոր գայր երկնի։ Աթոռ սոսկալի չորեք անկիւնի, յորում տէր բազմի։ Պայծառացաւ բորբոքեալ հոգի մարգարէութեան ի նմա ի տեսնէ անտի Աստուածութեանն։ Երարարձ և զմեզս ազգին խորայելի չարչարանօք մարմնոյ իւրոյ, վասն զի փոխանակ նոցատանջեալ կեցոյց զնոսա։ Եւ վասն Գանիէլի ճրպէս կարողացայց պատմել, որ Գարրիէլ հրեշտակապետն ցանկացաւ նմա, քանզի էր այր սուրբ, ամբիժ, բարի և հեզ, ընտիր և իմաստուն։ Եւ այլ ևս բազում առաքինութեամբ արիացեալ և հոգւով զարգարեալ և մօօք լուսաւորեալ, վասն այսպիսի վայելուչ գեղեցկութեան իւրոյ՝ հրեշտակապետն Գարրիէլ ցանկացաւ նմա և ողջունեաց զնա։ Եւ ոչ թէ միայն հրեշտակաց էր ցանկալի, այլ և հուրն և գազանքն պատկառեալ պակեան ի նմանէ, զարհուրեալ յաստուածավայելուչ երեսաց նորա, նա և պահք նորա և ազօթք՝ ընդունելի Աստուծոյ եղեն, և զարմացուցիչ անմարմնոց հրեշտակաց։ Վասն որոյ մեծ կտրապետն Գարրիէլ, այր ցանկալի ասաց զնա։

Կամիմ՝ և զգեղ երից մանկանցն ի գովասանութիւն առնուլ՝ որ զարգարեալ են։ Բայց ոչ ամենեւին թողացուցանէ ինձ հօւրն նայել ի պատկերս նոցա։ Նոքա հրաւիրեն զիս, այլ ես ոչ համարձակիմ մերձենալ ի տեղիս նոցա։ Երեք մօիւն ի հնոցն, և չորս տեսեալ լինէին, և փայլէին որպէս զոսկի ընտիր հրով փորձեալ դէմք նոցա։ Վասն զի սէլն Աստուծոյ վառեալ բորբոքէր ի հոգիս նոցա։ Վասն այնորիկ հօւրն պատկառէր ի նոցանէ՝ և ամփոփեալ զովացուցանէր զքնութիւն իւր, և որպէս զմայր սնուցիչ լինէր նոցա։ Լռեցից վասն պատմութեան գեղոյ նոցա, քանզի հօւրն ընդ ամենայն տիեզերս տարածանէր զճառս գեղեցկութեան նոցա։ Հրով են կազմեալ պսակք նոցա և ի հրոյ անկեալք բեհէզք և ծիրանիք զարդուց նոցա և վասն այնորիկ ոչ կարօտանան այլում՝ զարդուց։ Բուրեաց հօտ նոցա իբրեւ զիւղ անոյշ և փայլեաց առաքինութիւն նոցա իբրեւ զարեգակն, և ահաւասիկ ի դարէ մինչև ցդար ծագին և անուշահոտին զամենայն աշխարհս։ Արդ՝ զայս ամենայն զոր պատմեցի ձեզ, եղբարք, ոչ ընդ վայր և ի նանիր ինչ, այլ առ իցուցանել ձեզ զմեծութիւն փառաց մեծապարգև շնորհացն Յովհաննու, և բազմութիւն զօրութեան իմաստից նորուն, զոր ծածկեալ ունի բանն տէրունական, թէ չէ յարուցեալ որ մեծ ի ծնունդս կանանց քան զՅովհաննէս Մկրտիչ։ Զի թէ դք ունիցի աչս հոգւոյ՝ նա կարէ տեսանել զծածկեալ գանձն՝ որ ծածկեալ կայ ի նմա։ Եւ դուք ամենեքեան եթէ այսպիսիք էիք, ոչ ինչ լինէր միզ հարկ զայսքան ճառս բանից ի մէջ բերել։ Ապա եթէ ոչ կարէք ամենեքեան հոգւով նայել և հայել ընդ նա՝ ի յընդարձակութենէ բանից մերոց, մի՞ ծուլացեալ ձանձրանայք՝ որ յայանեմք ձեզ զհամեստութիւն սրբոցն՝ որ մօիւն յաշխարհս, և զբարձրութիւն որդւոյն Զաքարեայ. վասն զի բարձր է աստիճան նորա, և ոչ որ կարէ մարմնաւոր աչօք նայել ընդ նմա, եթէ ոչ թեթեւացեալ հոգւով վերացեալ բարձրանայ անդր ևս քան զմարմին եղեալ։ Քանզի ոչ եթէ նշանօք կամ արուեստիւք փայլեաց նա յաշխարհի ըստ աւետարանական բանին, եթէ Յովհաննէս նշանս ինչ ոչ արար, բայց զամենայն զոր և ասաց վասն նորա ճշմարիտ է։ Մովսէս բազում նշանս արար, որպէս և վրկայեն զիրք սուրբք, և հերձ զծովն Կարմիր և անցոյց զխրայել, աղբերացոյց զվէմն յերկոտասան վտակս, իջոյց զմանանայն

յերկնից, և եհան ի ծովէ զլորամարզն, քաղցրացոյց զդառնութիւն ջուրցն մեռային, և հնազանդեաց զտարերքս իբրև զԱստուած: Զայն ետուն նմա արարածք՝ յորժամ անցանէր ընդ անապատն, ցնծալով խայտացին լերինք և բլուրք առաջի նորա որպէս զգառինս մարեաց: Խօսեցաւ ընդ նմա Աստուած յամպոյն որպէս յանձանօթս, եմուտ և յառագաստն հրեղէն՝ ի գլուխ լերինն Սինայ, և ետես զԱստուած դէմ յանդիման, որպէս և գրեայն է, պայծառացան երեզր նորա որպէս Զահա, և այնպէս ծանեաւ զնա աշխարհ ի սքանչելի գործոց անտիբայց և ի վերայ այսր ամենայնի, ոչ է նա մեծ քան զՅովհաննէս ըստ բանին տեառն: Վասն զի և ի ծննդոց անտի կանանց է նա: Ապա եթէ որ ասիցէ՝ թէ վասն նորա վկայեն գիրք սուրբք՝ ոչ ևս ասեն եկաց մարգարէ յիսրայելի որպէս զՄովսէս, զոր ծանեաւ Տէր դէմ յանդիման ամենայն նշանօք և արուեստիւք: Ասեմք եթէ ի մարգարէս ասաց, այլ ոչ թէ յառաքեալս և յամենայն ծնունդս կանանց: Հեղ էր արդեօք Մովսէս և խոնարհ քան զամենայն մարդ, խուզեա՞ և գտանես զնա առ Յովհաննէս: Զի՞նչ քան զայսպիսի բարբառս խոնարհագոյն կայցէ՝ յորժամ այն որ ձեռնադրեաց զամենակատար գագաթն, գոչէր առաջի բազմամբօս ժողովրդեանն, եթէ ես չեմ արժանի լուծանել զխրացս կօշկաց նորա: Արար և գեղեցիկն Յեսու՝ որդի նաւեայ, սքանչելիս բազումս: Դարձոյց յետս զգետն Յորդանան և զբազմութիւն ջուրցն ժողովեաց որպէս ի տիկս, և անցոյց զբազմութիւն զօրացն որպէս ընդ ցամաք: Գոչեաց ձայնիւն իւրով, և բարձր պարիսպքն Նրիքովի անկան առաջի նորա: Այլ և յորժամ քաջութեամբ պատերազմէր ընդ թագաւորին Ամօրհացուոց, ինքնին Աստուած տայր պատերազմ՝ փոխանակ նորա և վանէր զթշնամիսն: Եւ յորժամ ընդ Քանանացիսն պատերազմէր, ետ հրաման ամպոյն և անդէն տեղայր ի վերայ նոցա կարկուտ քարեայ և սատակէր զնոսա: Այլ և արեգակն և լուսինն ոչ անցին զհրամանաւ նորա, այլ անդէն կացին զեռեղեալ: Եւ ի վերայ այսր ամենայնի զոր գործեացն Յեսու գովի է նա, սակայն ոչ է նա մեծ քան զՅովհաննէս: Աքանչելի էր և արդարն Նոյ. վասն զի թամբեաց զկարամեռն համատարածն ծովու իբրև զերիւար և հեծեալ արշաւէր ի վերայ խորոցն անդնդոց: Կոխէր չնչին տախտակամած փայտիւն զամեհի

ալիս ծովուն և հաստատէր զգարշապարս իւր ի վերայ անհուն
կոհակացն անբաւութեան խորոցն՝ իրբև ի վերայ վիմի: Տարա-
ժեաց զհաւատս իւր ի վերայ լոյծ բնութեան Զուրց՝ իրբև ըզ-
հիմն և շինեաց տունս գեղեցիկս ի բնակութիւն իւր և եղև
երկրորդ նախաճայր աշխարհի: Այն որ պատկեալն էր հինգհա-
րկրամեայ կուսութեամբն իւրով, եղև նա քահանայ ամբիժ և
պատարագ անուշահոտ բնդունելի Տեառն իւրում, սակայն և
յայտմ ամենայնի ոչ էր նա մեծ քան զՅովհաննէս: Մեծն և
սքանչելին ենովք, այն որ յանմահութիւն փոխեցաւ, պահօքն
և մարութ փարուքն իւրովք, որ թէպէտ և մեռանի, սակայն
յորժամ ինքն կամիցի, այլ ոչ եթէ նա մեծ է՝ քան զՅովհան-
նէս: Արդ՝ զայս տմենայն յառաջ ածեալ ցուցաք ձեզ եղբարք,
զի գիտաւ իբր զբազմադէմ՝ շնորհսն, որ ծածկեալ կան ի Յով-
հաննէս: Վասն զի յինքն ամփոփեալ ժողովեաց զամենայն սրբ-
րոցն առաքինութիւնս զհնոց և զնորոց: Սպանաւ վասն Տեառն
իրբև զԱբել, գեղեցիկ էր առաքինութեամբ իրբև զԱբել, հաս-
տատեալ էր յուսով իրբև զենովս, հաճոյ եղև Աստուծոյ որպէս
զենովք, կատարեալ էր արդարութեամբ իրբև զնոյ, սիրեաց
զԱստուած որպէս զԱբրահամ: սիրելի և հնազանդ եղև Աստու-
ծոյ որպէս զԻսահակ, ամբիժ և անաբատ իրբև զՅակոբ. եղաւ
ի գրի ի տարապարտուց որպէս զՅովսէփ, նախածանօթ եղև
Աստուծոյ յորովայնէ՝ որպէս զՄովսէս. ընտրեցաւ ի քահանա-
յութիւն Աստուծոյ իրբև զԱհարոն, ողջախոհ էր սրբասէր մը-
տօքն որպէս զՅեսու. անինչք էր և անստացուածք որպէս զՄե-
քիսեղեկ: Զատեալ էր յամենայն չարեաց՝ որպէս զՅոր. բա-
րի էր բարութն իրբ զԵղիազար: Արի էր հոգւովն որպէս Փե-
նեհէս. աւետեաց էր ծնունդ՝ որպէս զՄամոն, ամիոյ էր պը-
տուղ իբր զՄամուէլ. ուղիղ էր սրախն՝ որպէս զԴաւիթ, ի էր
իմաստութեամբ իբր զՍողոմոն, նախանձաւոր էր օրինացն Աս-
տուծոյ իբր զՀեղիաս. այլ և կարապետ էր առաջին գալստեանն
որպէս և նա երկրորդին, չեղև ինչ նուազ ի կրկին ոգւոյ անտի
Նդիսէի, սրբեցաւ հոգւով սրբով յորգանդէ անտի որպէս զԵ-
րեմիա: Եւ զի՞ ևս թուեցից, զամենայն միանգամայն ասացից
համառօտագոյն զխորհրդոյն զօրութիւն, զի զեր նորա յառա-
ջագոյն հոգւով սրբով մարգարէութեամբ խօսեցան, սա և ձե-
ռամբ շօշափեաց և աչօք մարմնոյ իսկ ետես և բերան ի բերան

խօսեցաւ: Եւ զու լուր իսկ և ի միտ առ զասացեալս, ասաց Նաայի, եթէ ահա կոյսն յղասցի և ծնցի որդի, իսկ Յովհաննէս ձեռօք մկրտեաց զկուսածին որդի: Ետես և նա, Նաայի, զՅէր նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ և զպարս սերովբէից՝ շուրջ զնովաւ՝ որ թեւարօղեալ ծածկէին զդէմն իւրեանց զարհուրեալք յաշէ փառաց նորա: Լուաւ և զբարբառ նոցա, որք փառարանութեամբ և մարգարէութեամբ պատմէին զհանդերձելոյն, լի ասելով զամենայն երկիր փառօք նորա, ընկալաւ ի նոցանէ և զկայծակն սրբութեան, մերձեցուցեալ ի շրթունս իւր, իսկ Յովհաննէս ետես յայտնապէս և ոչ թէ տեսեամբ, բովանդակեալ ի մարմն ի և ոչ թէ ի մէջ սերովբէիցն, նայեցաւ և ետես զեկեալ փրկութիւն աշխարհի, որով լցան ամենայն տիեզերք փառօք նորա, եցոյց մատամբն և ըզգառն ճշմարիտ, որ էր ծածկեալ կայծակն Աստուածութեան, որ պատարագեալ ի վերայ սրբայ խաչին, սրբեաց զմեզս ամենայն աշխարհի: Իսկ եզեկիէլ ի վերայ Քոբար գետոյ ետես կառս քերովբէից և ի նոսա զխորհուրդ Երրորդութեանն, բոլոր Յովհաննէս և զբոլոր Երրորդութիւն ի Յորդանան յայտնապէս տեսանէր, վասն զի որդի եկեալ մարմնով մկրտէր ի նմանէ, իջանէր անդ և Հոգին սուրբ աղանակերպ տեսեամբ, աղաղակէր և Հայր ի վերուստ եթէ գա է Որդի իմ՝ սիրելի: Ետայիտս զՅիսուս գառն կերպարանեաց, իսկ Յովհաննէս զնոյն ետես և վերկայեաց: Զաբարիաս զՔրիստոս ծագումն անուանեաց, իսկ Յովհաննէս զնոյն ծագումն ետես և եղև նմա յառաջընթաց կարապետ: Ետայիտս զՔրիստոս հնձանահարի նմանեցոյց, իսկ Յովհաննէս և զարիւն գառին, նախ քան զպատարագելն ի վերոյ խաչին, որպէս զգին ի տնոյ ժատրուակեաց: Եւ արդ զի՛նչ ևս ասացից յիշատակելով զմիով կամ զերկուս և կամ զբազումս ի մարգարէիցն, զի ահաւասիկ զբոլորեցունց նոցա յինքն ամփոփեաց Յովհաննէս զշնորհս, վասն զի զոր նոքա սերմանեցին ի բազում ժամանակո՞ զայն ամենայն Յովհաննէս ընդ բնութեամբ արկեալ հնձեաց ի գիրկս իւր ժողովելով զորայն և յըշտեմարանս անմահ թագաւորին ժողովեաց զյորեանն կենաց: Խօսեցաւ զհարան եկեղեցի անմահ փեսային ի ձեռն քարոզութեանն, որ առ մկրտութիւն աղաշխարութեան: Գեղեցկացոյց զնա և հրաշտելի զարդուքն, զարեանգ ի ջրոյ և միաւորեաց

ընդ փեսային վկայութեամբն հօր ի բարձանց և հոգւոյն սրբոյ՝ աղանակերպ իջմամբ: Ուրախացոյց և զարդիսն ի հարսանիսն հանդերձ փեսաւերօքն, զենմամբ գառինն անմահի, որ բառնայ զմեզ աշխարհի: Արդ վասն այսր ամենայնի, և որ սոցին նման են անհամեմատ գեղեցկութիւն Յովհաննու յամենայն սուրբս. և մեզ ոչ ևս է կարել ի նկարագրել զբանս՝ բայց եթէ Տէր մեր Յիսուս Քրիստոս որ և ստեղծ զնա յարգանդի մօր իւրոյ, նա գիտէ զՅովհաննէս և նա յայտնեաց մեզ զգեղեցկութիւն նորա համառօտ բանիւս, եթէ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս որ չէ յարուցեալ: Բայց արդ յայսմ հետէ բանս մեր զկայ առցէ՝ որ վասն Յովհաննու, շտեմարանելով այլոց իմաստնոց զառաւել ներբողակ դրուատիս նորա, և մեր առանձին եղեալ խօսեացուք աղերսալի պաղատանօք ընդ նմա. Ո՛վ դու կենդանի վկայ անապականութեան և գալստեան բանին Աստուծոյ, գլուխ պարու մարգարէիցն, որք յառաջագոյն պատմեցին զգալուստ բանին, որում դու կարապետ գոլով ականատես եղեր: Դու սկիզբն առաքելական դասուն, որ վկայեցին մարմնով գալստեան բանին Աստուծոյ, զոր և դու յարգանդի մօր քո տեսեալ զնա յարգանդի կուսին և բերանով մօր քո դուանեցեր զաստուածութիւն նորա: Դու և օրինակ մարտիրոսական գնդին, որ նախ քան զպատարագիլ գառինն պատարագեցար ի վերայ նորա, որպէս և զկնի նորա երանելին Ստեփաննոս: Դու նախանձաւոր և վրէժխնդիր օրինացն Աստուծոյ՝ առ յօրինակ հովուաց հօտին Քրիստոսի, որ յառաջ քան զնոսա հալածեցեր զգալլն ապականիչ ի գաւթէ գառանց սրբոց: Դու և սկիզբն ճգնաւորական վարուց միանձանց, որ անգստին ի խանձարոցն յորովայնի սկսար արտաքայ քան զբնութիւնս եղեալ՝ որպէս հրեշտակ ի մարմնի գոլով: Զոր աղաչեմ իբրեւ զկենդանի վկայ Քրիստոսի և մերձ առ թագաւորդ անմահ. բնակալ զպտուղ շրթանց իմաց, զոր ըստ կարի իմում հիւսեալ յօրինեցի քեզ պսակ ի պատուական ականց, այս է յիմաստից զրոց սրբոց, և հատուկն ի քո առատապարգև ձրիցդ զթուութիւն մեղաց գտանել յաւուրն աներեկի յանաչառ և յանհրաժեշտ վճռին: Վասն զի հաւատամք շտեմարանապետ գոլով զքեզ գանձու ողորմութեան ահաւոր և արդար դատաւորին: Այլ և զբոլոր եկեղեցիս քրիստոնէից պահել անարտօ,

գոր գնեաց արեամբն իւրով Կառնդ անմահ, վկայեալդ ի քէն, որ եբարձ զմեղս աշխարհի, պատարագ՝ որ մատեաւ Աստուծոյ հօր ի վերայ խաչին: Որպէս զի ամենեքումբք հանդերձ հովուօք և դաւանողօք ճշմարտութեամբ Կեցեալ յայսմ՝ աշխարհիս, առաքինասէր վարուք և ուղղափառ դաւանութեամբ ի Քրիստոս և ի հանդերձելումբ: Եւ առանց ամօթոյ կացցուք առաջի ահաւոր բեմբիշ, մասն և բաժին ընկալեալ ընդ ամենայն սուրբս յարքայութեանդ երկնից՝ և քե հանդերձ յարազուարճ բերկրանօք միշտ և հանապազ փառաւորելով զամենասուրբ Երրորդութիւնն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ապրիլի վեցը նշանաւոր էր Հայ ազգի համար. և այդպիսի օրեր շատ քիչ են պատահած: Այդ օր սկսուեցաւ Ս. Էջմիածնի Տաճարի վերանորոգութիւնն և Տպարանի շինութեան հիմքը սկսան փորել:

Արդէն երկու տարի է, որ Ս. Էջմիածնայ Տաճարի վերանորոգութեան խնդիրը զարթած է, շատ խօսուեցաւ գորա մասին, շատ առաջարկներ եղան. մի քանի ճարտարապետներ իրանց կարծիքները տուին. ոմանք լաւ համարեցին միայն նորոգել, պահպանելով հնութեան ճարտարապետութիւնը, միւսներն աւելի լաւ համարեցին հիմնաւորապէս նորոգել եկեղեցին: Ամեն կարծիքները լսելից և ճարտարապետների առաջարկները զննելից յետոյ՝ Նորին Օծութիւն Աւհափառ Հայրապետն ամենայն Հայոց որոշեց որբութեամբ պահպանել եկեղեցու հնութիւնն և միայն նորա պահպանութեան համար կարեւոր վերանորոգութիւնքն անել, այն է ազատել նրան ապագայում խռնաւութեան ազդեցութիւնից և ժամանակի ժանիքի վնասները ապաքինել և այն կարեւոր միջոցները գործ գնել, որով տաճարի գոյութիւնը մշտապէս ապահոված կլինի:

Տաճարի ապահովութեան և անխախտ պահպանութեան համար մասնագէտների միջնորդութեամբ անելիքն իմանալից և որոշելից յետոյ Աւհափառ Հայրապետը հրամայեց մրճի առաջին